

այցելեց Պետերբուրգ և Մոսկուա: 1889 ին Երուսաղէմի Վեհապետեան Յարութիւն Պատրիարքը Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէն կ'առաջնորդէ Կ. Պոլսէն իր աթոռը, Ս. Յակոբի վանքը. կը վախճանի 1893 ին Պոլիս. տեսնել իր կենսագրութիւնը (Արախ, 1887, էջ 33-34): Նար Պէյ գրական աշխատութիւններունի. բացի կրօնական մէկ երկու դասագիրքէ և 1869 ին Հայոց Եկեղեցին եւ Անդրադեմակամի գիրքէն. Մասեաց Աղաւնի հանգէսին խմբագիրներէն մին եղած է (1855-58, Փարիզ, 1860-65, Թէոդոսիա), Բագնալիպի մէջ քերթուածներ գրած է (1852-57), թարգմանած է Լամարթինի Դաշնակները (տպ. Փարիզ, 1859). յօրինած է Արշակ Բ. Ողբերգութիւնը 1861 ին, Արափրակա կասկերգութիւնը 1862 ին, Վարդէնի խորագրով գրաբար բանաստեղծութիւնները 1863 ին. Քնար պակիսիս ոք Փարիզ եւ Պոլիս հրատարակած քերթուածներուն հաւաքածոն ըլլալով՝ 1868 ին գայն նուիրած է Գէորգ կիթղին. 1877 ին Ֆրանսերէնէ հայերէնի կը թարգմանէ Յովնաննիս Տարսկի տարեգրութիւնը Կարապետ Եգեանցի խնդրանքով. 1881 ին Հոմերոսի Իլիականին առաջին երգը յօն բնագրէն հայ. աշխարհաբարի կը վերածէ, (Մասիս յրագիր, 1881, Նոյ. 28, Գեկտ. 2, 5, 17, 19 և 26 համարներուն մէջ). հրատարակած է նաև Ստուերտ Հայկական բանաստեղծութիւնը և այլն: Նախապէս Լամարթինի եւ ապա Վիքթոր Հիւկոյի հետ տեսակցած ու բարեկամացած է. 1879 ին վերջինէս ստացած է սրտառուչ նամակ մը Փարիզի մէջ: Եր. Շահազիզ գրական ընդարձակ տեսութիւն մը ունի Նար Պէյի երկասիրութեանց մասին. (Լուսնայ, 1902-1903):

ԽՈՐԷՆ ԵՊՍ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, ՎԱՆԵՅԻ. — Մբ. Ծ. 1822 ին Աւանց գիւղին մէջ. աշկ. Ժառ. Վարժ.ի (1859-62), Զո. 1862 ին, Տեսուչ դպրոցներու 1866 ին, ՏՅ. ՏՓ. և ՏՈ. (1866-1870), ՓԿԵ, (1870-73), անդամ Կրօն. Ժողովի 1871 ին, քարոզիչ Պալատու 1876 ին, խորհրդական Ներսէս պատրիարքին Պոլսի (1874-77), եպս. կը ձեռնադրուի 1876 ին, Տեղապահ Մշոյ 1876 ին, Առ. Եգեսիոյ (1876-1897), Երկիցս այցելու հովիւ Տիարպէքերի, (1881 և 1887). կը վախճանի Եգեսիոյ Ս. Սարգիս վանքին մէջ 1903 Յնվր. 22: Յօրինած է,

1. Հաւանոս Պատմ. Ս. Երուսաղէմի (տպ. Ս. Երուսաղէմ, 1867).